Արձանագրություն N 2
ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/16 ծածկագրով ապրանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 04.12.2019թ.
ժամը 14:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ՝ Օ. Ներսիսյան
Ժ. Մելքոնյան
Լ. Սարիբեկյան
Կ. Բարսեղյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/16 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Մ. Գրիգորյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի դեկտեմբերի 2-ին, ժամը 11:30-ին:

բ) Գնման գործընթացը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Չափաբաժինների համարները	Մասնակցի անվանումը	Ապրանքի անվանումը	Քանակը	Նաղախահշվային արժեք	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
2	<<Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի>> ԱՁ	Կախովի ռելսեր կամ բռնիչներ-2	50 հատ	225000	150000	-	150000
	<< ԼԱՅԹԻՆԳ>> ՍՊԸ				162500	32500	195000
	<<ԼԱՅԹԻՆԳ-ԱԼԵՔ>> ՍՊԸ				333333.33	66666.67	400000
	<<ՏԻԳՐԱՆ>> ՍՊԸ				350 000	70000	420000
	<<Էկոմիքս>> ՍՊԸ				458166.67	91633.33	549800
3	<<Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի>> ԱՁ	Էլեկտրական լամպեր	75 հատ	1500000	900000	-	900000
	<<Էկոմիքս>> ՍՊԸ				906000	181200	1087200
	<<ՏԻԳՐԱՆ>> ՍՊԸ				1425000	285000	1710000
	<<ԼԱՅԹԻՆԳ>> ՍՊԸ				1806250	361250	2167500
	<<ԼԱՅԹԻՆԳ-ԱԼԵՔ>> ՍՊԸ				2187500	437500	2625000

1.2 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ին N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և ծանուցել բավարար գնահատված <<Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի>> ԱՁ-ին, <<ԼԱՅԹԻՆԳ>>, <<ԼԱՅԹԻՆԳ-ԱԼԵՔ>>, <<ՏԻԳՐԱՆ>> և <<Էկոմիքս>> ՍՊԸ-ներին 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում 2019 թվականի դեկտեմբերի 4-ին ժամը 14:30-ին գների նվազեցման շուրջ բանակցություններին մասնակցելու մասին:

1.3 Բանակցություններին ներկայացել են <<Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի>> ԱՁ-ն, <<ԼԱՅԹԻՆԳ>> և <<ՏԻԳՐԱՆ>> ՍՊԸ-ները: Բանակցությունների ընթացքում նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

2. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/16 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցի մասին

(Մ. Գրիգորյան)

2.1 Հիմք ընդունելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովի գնահատման թերթիկները և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ մասնակիցների հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

Չափաբաժին 2 Դյուրակիր համակարգիչներ		
Մրցույթում զբաղեցրած տեղը	***Մասնակցի անվանումը***	***Հայտի գնահատականը***
1	<<Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի>> ԱՁ	բավարար
2	<< ԼԱՅԹԻՆԳ>> ՍՊԸ	բավարար
-	<<ԼԱՅԹԻՆԳ-ԱԼԵՔ>> ՍՊԸ	անբավարար
-	<<ՏԻԳՐԱՆ>> ՍՊԸ	անբավարար
-	<<Էկոմիքս>> ՍՊԸ	անբավարար
Չափաբաժին 3 Բազկաթոռներ		
Մրցույթում զբաղեցրած տեղը	***Մասնակցի անվանումը***	***Հայտի գնահատականը***
1	<<Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի>> ԱՁ	բավարար
2	<<Էկոմիքս>> ՍՊԸ	բավարար
-	<<ՏԻԳՐԱՆ>> ՍՊԸ	անբավարար
-	<<ԼԱՅԹԻՆԳ>> ՍՊԸ	անբավարար
-	<<ԼԱՅԹԻՆԳ-ԱԼԵՔ>> ՍՊԸ	անբավարար

2.2. Հիմք ընդունելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ ընթացակարգի 1-ին չափաբաժինը (կախովի ռելսեր կամ բռնիչներ-1) հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Մ. Գրիգորյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշում է.

ա) ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ <<Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսի>> ԱՁ-ի (այսուհետ՝ Մասնակից) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

բ) Ծանուցել Մասնակցին՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/16 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Մ. Գրիգորյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու օրվանից հաշված մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Մ. Գրիգորյան

Անդամ՝ ---------- Օ. Ներսիսյան

---------- Ժ. Մելքոնյան

---------- Լ. Սարիբեկյան

---------- Կ. Բարսեղյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան